



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 31 ՅՈՒՆ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹԵ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 39 ԻՆՉ ՎԱՂԱՆՑՈՒԿ Է ԿԵԱՆՔԸ

Ես ինձի խորհեցայ.-

Ինքզինքիս հսկեմ, որ խօսքով չմեղանչեմ.
բերնիս սանձ դնեմ ամբարիշտ մարդոց ներկայութեան:

Ականջներս փորձեցի փակել,
ամենեւին լուռ մնացի, բայց՝ անօգուտ.

ձաւերս աւելի սաստկացան:

Միրքս մէջս բորբոքեցաւ,
միտքս փնտրով բռնուեցաւ, սրիպուեցայ խօսելու.-
Յոյց Կուր, ով Տէր, իմ վախճանս.

Ինչքան պիտի ըլլայ փետողութիւնը կեանքիս,
գիտնամ՝ թէ ինչքան վաղանցուկ եմ ես:

Գիտեմ, կեանքիս օրերը մարտի վրայ կը համրուին,
անոր փետողութիւնը ոչինչ մըն է քու աչքիդ.

եւ արդարեւ լոկ շունչ մըն է մարդու գոյութիւնն ամբողջ:

Արդարեւ մարդս շրջուն սպուտեր մըն է լոկ.

գուր փեղ կը փագնապի, կը դիզէ,
առանց գիտնալու՝ թէ ով պիտի ժառանգէ զայն:

Հետեւաբար, ուրիշ որո՞ւ յոյս դնեմ, Տէր,
դուն ես յոյս:

Բոլոր իմ յանցանքներէս փրկէ զիս.

անմիտ մարդոց ծաղրին առարկայ մի դարձներ զիս:

Լուռ պիտի մնամ, պիտի չբանամ բերանս,
որովհետեւ դուն է որ զիս այս վիճակին մարմնեցիր:

Հեռացուր ինձմէ քու փութած այս պարիծող,
որուն սաստկութեան ալ չեմ դիմանար:

Մեղքը կշտամբելու համար կը պարժես մարդը,
ցեցի պէս կը մաշեցնես անոր սիրած բաները:

Արդարեւ մարդս շունչ մըն է պարզապէս:

Լսէ իմ աղօթքս, Տէր, մտիկ ըրէ աղաչանքս,
անպարասիսան մի ձգեր արցունքներս.

որովհետեւ ես քու քովդ պանդուխտ մըն եմ,
անցորդ հիւր մը՝ բոլոր հայրերուս նման:

Թոյլ Կուր որ քիչ մը հանգիստ վայելեմ
նախքան մեկնումս, նախքան մեռնիլս:



ԻՆՉ ՎԱՂԱՆՑՈՒԿ Է ԿԵԱՆՔԸ

Եթե ուզենք բանի մը բառերով ամփոփել այս Սաղմոսը, ապա կարելի է անոր մէջ տեսնել հետեւեալը, Աստուծոյ սէրը հանդէպ մարդուն եւ Աստուծոյ արելութիւնը հանդէպ մեղքին: Երբոր մեղքի մէջ ենք, Աստուած պիտի դաստիարակէ մեզ, որպէսզի ետ իրեն վերադառնանք: Ահա այդ պահուն է որ զգոյշ պէտք է ըլլանք որպէսզի չմեղանջենք բարկութեամբ կամ Աստուծոյ հայտնութեամբ: Այլ խոնարհութեամբ Աստուծմէ խնդրելու մեղքերու ներում, եւ միշտ յիշելու որ Ինքն է մեր միակ յոյսը:

Առաջին իսկ համարով Դաւիթ ինքզինքին կը խորհին, որ իր նեղութեան ու իր ցաւին մէջ լուռ մնայ չբողոքէ, որպէսզի չըլլայ թէ իր արտայայտութեամբ մեղանջէ: Որովհետեւ յաճախ մեր նեղութեան ու մեր ցաւին մէջ երբ ալ ի վիճակի չենք տանելու եւ տոկալու, պիտի արտայայտուինք, եւ երբ արտայայտուինք կրնանք մեղանջել, սխալ բաներ ըսել: Երկրորդ, Դաւիթ կ'ուզէ որ լուռ մնայ, այս անգամ ամբարիշտներուն ներկայութեան, որպէսզի չըլլայ թէ ամբարիշտները առիթն օգտուելով Աստուծոյ դէմ ելլեն, որովհետեւ արդէն Աստուծոյ դէմ են: Այս անգամ ըսելու, տես Դաւիթը որ այսքան Աստուծոյ մօտ, Աստուծոյ մարդն է, ինք կը բողոքէ:

2-3րդ հմր, Դաւիթ իր ականջները կը փորձէ փակել, որպէսզի ըսի ըսաներէն չազդուի: Որովհետեւ այս անգամ ըսի ըսաները զինք կը խանգարեն, ու ինք իր կապը ու իր հաւաքարմութիւնը կորսնցնելու Աստուծոյ նկատմամբ: Ամբողջութեամբ կը փորձէ լուռ մնալ, բայց՝ անօգուտ: Ինչո՞ւ, որովհետեւ ցաւերը աւելի սաստկացան, սիրտը մէջը բորբոքեցաւ, միտքը տենդով բռնուեցաւ, եւ ալ ստիպուած է խօսելու: Մենք ալ յաճախ լուռ կ'ուզենք մնալ, համբերել, տոկալ, բայց ահա այս բաժինը մեզ կը յիշեցնէ մարդուս վիճակը, որ ալ ի վիճակի չէ լուռ մնալու: Նոյն վիճակէն նաեւ անցաւ մեր տէրն ու փրկիչ՝ Յիսուս Քրիստոս, ի փարբերութիւն, ոչ որպէս դժգոհանք, այլ՝ որպէսզի մարդկային վիճակի բնական արտայայտութիւն: «Եթէ կարելի է այս բաժակը ինձմէ հեռացնել, բայց եթէ քու կամքդ է որ խմեմ, թող որ խմեմ»: Եսայի մարգարէն, այնքան գեղեցիկ կը ներկայացնէ, երբ կ'ըսէ, «Սպաննուելու փարուեցաւ, ան նոյնիսկ իր բերանը չբացաւ», իսկ խաչակից աւազակներէն մէկը պիտի ըսէր, «Մենք եթէ կը խաչուինք մեր մեղքերուն համար, իսկ Ան արդար մարդ է»: Այստեղ եւս Դաւիթ պիտի անդրադառնայ որ իր կրած կամ ունեցած ցաւերը, խորքին մէջ ուրիշ բան չեն եթէ ոչ մեղքը կշտամբելու համար պարիժ:

4-5 հմր Դաւիթ կ'ուզէ արտայայտուիլ, բերանը բանալ, բայց Աստուծոյ հետ խօսելով, ու Անոր հարցնելու թէ այս բոլորը մինչեւ երբ: Դաւիթ ուղղակի աղբիւրին է որ կ'երթայ, փոխանակ հոս ու հոն երթալու: Փոխանակ մարդուն դիմելու, կը դիմէ Աստուծոյ: Տոյց տուր, ով Տէր, իմ վախճանս, կեանքիս փրկութիւնը որքան է: Ան նաեւ կ'անդրադառնայ որ իր կեանքը վաղանցուկ է, կեանքին օրերը մարի վրայ կը համրուին, առաւել եւս որքան ալ երկար ըլլան կեանքին օրերը Աստուծոյ աչքին ոչինչ են, եւ ուստի մարդուս գոյութիւնը պարզապէս շունչ մըն է ուրիշ ոչինչ:

6-7 հմր, փակաւին մարդուն կեանքը կը նմանի շուքի, ինչպէս որ շուքը ուրիշ բան չէ եթէ ոչ արեւուն ճառագայթին ազդեցութիւնը, երբ այդ ազդեցութիւնը անցնի, այդ շուքն ալ կ'անցնի: Այս բոլորը նկատի առած, Դաւիթ կը խոստովանի, որ ի գուր տեղ կը տաճարապի մարդը, եւ այդ տաճարապը դիզելու տաճարապն է, որ ոչ ալ գիտէ թէ այդ դիզուածը ով պիտի ժառանգէ: Ուստի կու գայ այն եզրակացութեան, թէ իր միակ յոյսը այդ դիզուածին վրայ չէ, այլ՝ Աստուծոյ:

8 հմր իմ պահն է մեղքի խոստովանութեան: Իմ յանցանքներէս փրկէ զիս, մանաւանդ՝ անմիտ մարդոց ծաղրին առարկայ մի դարձներ:

9 հմր, Դաւիթ կ'ուզէ լուռ մնալ, ջրանալ բերանը: Որովհետեւ Աստուած Ինք է որ այս վիճակին բերաւ: Այսինքն՝ այս ցաւի ու տաճարապի վիճակը Աստուած Ինք տուաւ Դաւիթին, բայց որպէս ի՞նչ: Որովհետեւ սիրելիներ, եթէ չկարենանք հասկնալ այս բոլոր եղածին նպատակը, ապա կրնանք առաւել եւս մեղանջել: Անոր համար ալ ամբողջութեամբ պէտք է կարդալ հապուածը, եւ ոչ թէ միայն նախադասութիւնը դուրս բերելու եւս միայն այդ ըսուածով եղրակացութեան հանգելու:

10-11 հմր, Դաւիթ կը խնդրէ որ Աստուած ալ հեռացնէ իրմէ տուած պարիժը, որուն սաստկութեան ալ չի դիմանար: Բայց այդ պարիժը Դաւիթ կ'ընդունի իր մեղաւորութեան իբրեւ արդիւնքը, որովհետեւ կ'ըսէ, «Մեղքը կշտամբելու համար կը պարժես մարդը», այսինքն՝ խորքին մէջ այդ պարիժը առիթ մըն է ու պէտք է ըլլայ անդրադարձի եւ մեղքը ճզմելու, անով դարձի գալու, եւ Աստուած այնպէս մը կ'ընէ, որ մարդուս սիրածը ցեցի պէս կը մաշեցնէ, որպէսզի մարդը այդ բոլորը տեսնելով անդրադառնայ, թէ ինչ բանի վրայ դնէ իր յոյսը, բանի մը վրայ որ կը մաշի, կը հիմանայ, չես

կրնար անոր վարահիլ, նոյնիսկ այս կեանք կոչուածին, երբ այս կեանքն ալ պարզապէս շունչ մըն է, որ երբ պահը գայ ուրիշ բան չընէր եթէ ոչ փչելու եւ հոգին աւանդելու:

12հմր, ուրեմն Դաւիթ կը խնդրէ, որ Աստուած լսէ աղօթքը, մտիկ ընէ աղաչանքը, եւ անպարսխան չձգէ արցունքները, որ կը նշանակէ այդ մեղքին համար թափած արցունքները, զոջումի եւ ապաշխարութեան: 13հմր կը խնդրէ որ քիչ մը հանգիստ ունենայ եւ կեանքին մնացեալ օրերը հանգիստ վայելէ նախքան իր մեկնումը այս աշխարհէն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի փանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*